

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի ամանորյա շնորհավորական ուղերձը

26.12.2014



Մի րեւի վայոցձորցիներ:

Անկեղծ սիրով ու խորին հարգանքով շնորհավորում եմ ձեզ Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ: Մաղթում եմ ձեզ ուրախ Ամանոր, բարեկեցություն, առողջ ու երջանիկ օրեր:

Յուրաքանչյուր գալիք տարի իր հետ բերում է նոր երազանքների, անավարտ ծրագրերի իրականացման ցանկալի հույսեր և իր տոնական լույսերով շղարշում նախորդ տարվա դժվարությունները: Ցանկանում եմ, որ 2014 թվականի ընթացքում եղած դժվարություններն ու անհաջողությունները մնան անցյալում և մենք 2015 թվականը թևակոխենք առողջ և ուրախ տրամադրությամբ, ստեղծելու և արարելու հաստատակամությամբ: Թող 2015 թվականը մեր մարզին բերի հաջողություններ՝ տնտեսության կենսագործունեության բոլոր ոլորտներում:

Թող գալիք Նոր տարին լինի ձեր ձեռնարկումների հաջողության, իդեերի իրականացման տարի և դառնա նոր նվաճումների ու ձեռքբերումների հիմնաքարը: Ձեր ընտանեկան հարկերի տակ թող մշտապես խաղաղություն տիրի և թևածի երջանկությունը:

Մի րեւիներս, մաղթում եմ, որ 2015 թվականը մեր երկիր ու մեր մարզ մուտք գործի խաղաղությամբ, լինի բարիքներով լի տարի և արձանագրվի բազում հաջողություններով:

Կրկին շնորհավորում եմ ձեր տոնը:

Ձեր ընտանիքներին՝ անսպառ սեր, մշտավառ հույս ու անսասան հավատ:

Մի րեւի հայրենակիցներ, ապրեցեք խաղաղությամբ ու Աստծո օրհնությամբ: